ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 41-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 26-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 26-Լ հրամանով հաստատված հավելվածի.

1) 10-րդ կետը լրացնել նոր 11-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) «Թեժ գիծ» ծառայությունում Նախարարության աշխատակիցների և ծառայողների վերաբերյալ ստացված ահազանգերի ընդունումը և վերլուծությունը, ինչպես նաև դրանց արձագանքման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը:»:

2) 15-րդ կետը լրացնել նոր 1.1-ին ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) Նախարարության «Թեժ գիծ» ծառայությունում Նախարարության աշխատակիցների և ծառայողների վերաբերյալ ստացված ահազանգերի ընդունումը և վերլուծությունը, ինչպես նաև դրանց արձագանքման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը,»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

«21» 12. 2023թ.

ք. Երևան